

### Մրցույթի հայտարարություն

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթք գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի համաձայն՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթք գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ

նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթք գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում, 2021 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև հոկտեմբերի 21-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև ժամը՝ 15:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի նոյեմբերի 4-ին՝ ժամը 13:00-ին, «ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթք գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում:

Տեղեկությունների համար դիմել «ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթք գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անդամներ Գ.Սարգսյանի հեռ.093803292, էլ.փոստ. amalya.sargsyan.88mail.ru, Մ.Խաչատրյանին, հեռ.093100790, էլ.փոստ. sotqi@mail.ru: